Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 08-02-2022 թ. որոշմամբ
«ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Չելյուսկինցիների 62
1.3 Պետական գրանցման համարը		222.160.02410
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		1999-11-29
1.5 ՀՎՀՀ-ն		00428547
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91510778
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		ytoroyan@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Յուլյա Թորոյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	0	0
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակով իրականացման համար	44,400,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Բարեգործական նպատակով իրականացման համար	150,000,000
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	

Digitally signed by
MARGARYAN
MARGAR
3601420104
Date: 2022.09.12
16:43:13

9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
քաղցկեղով և արյան հիվանդությամբ երեխաների բուժում	8,000,000	
Երևանի Պետ.Կոնսերվատորիայի 100 ամյակին նվիրված օգնություն	3,000,000	
Արցախի վետերանների միությանը	5,000,000	
Երևանի կանգառների տեղադրում և լուսավորություն	11,364,000	
Թոշակառուների Ամանորյա սննդամթերքներ	7,574,676	
Անապահով անհատներին օգնություն	2,604,000	
բուժօգնություն,	150,000	
ուսման վարձավճար	480,000	
անհայտ կորած զինվորների ծնողներին ուխտագնացության համար	500,000	
երեխաների տոնին նվիրված համերգի կազմակերպում	150,000,000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	198,796,402	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	188,672,676	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ___22___թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՍՈՒՔԻԱՍՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

31 դեկտեմբերի 2021թ.

Բովանդակություն

Հոգաբարձուների խորհրդի կազմը	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Գործունեության և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

MELIKYANS & CO

ՄԵԼԻՔՅԱՆՍ ԸՆԴ ՔՈ
ՀՀ, ք.Երևան 0014
Ազատության 24/19
Հեռ. + 374 95 90 19 49

MELIKYANS & CO
24/19 Azatutyan Str.
0014 Yerevan, Armenia
Tel. + 374 95 90 19 49
www.mco.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սուքիասյան» Բարեգործական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սուքիասյան» Բարեգործական Հիմնադրամի (այսուհետ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆինանսական վիճակի մասին, գործունեության և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին, Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և հաշվետվություններին կից ծանոթագրությունները 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող տարիների համար:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար.

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

MELIKYANS & CO

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար.

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած

MELIKYANS & CO

հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արամ Մելիքյան

Տնօրեն՝

Ռոբերտ Մելիքյան

Առաջադրանքի պատասխանատու

Աուդիտոր՝

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ՄԵԼԻՔՅԱՆ ԵՎ ԿՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ
ГРАЖДАНИН "МЕЛИКЯНС & КО" ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ
RA YEREVAN "MELIKYANS & CO" LIMITED LIABILITY COMPANY
00430505

7 փետրվարի 2022թ.

Հոգաբարձուների խորհրդի կազմը

Ալբերտ Սուքիասյան

Խորհրդի նախագահ

Սարիբեկ Սուքիասյան

Խորհրդի անդամ

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ խորհրդի նախագահ

Էդուարդ Սուքիասյան

Խորհրդի անդամ

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ՓԲԸ խորհրդի նախագահ

Ռոբերտ Սուքիասյան

Խորհրդի անդամ

«Երևանի ալրաղաց» ԲԲԸ նախագահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Տրված կանխավճարներ		6,477	5
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	4	16,564	20,961
		23,041	20,966
Ընդամենը ակտիվներ		23,041	20,966
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		-	136
Պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամտին վերաբերվող շնորհներ	5	23,041	20,830
		23,041	20,830
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		23,041	20,966

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 7 փետրվարի 2022թ.-ին

Գործադիր տնօրեն՝ Յուլյա Թորոյան

Գլխավոր հաշվապահ՝ Մարգար Մարգարյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 10-ից 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Գործունեության և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ.	2020թ.
Եկամուտ			
Շնորհներից եկամուտ	6	192,189	171,690
		192,189	171,690
Ծախսեր			
Հատուցումներ աշխատակիցներին		(2,926)	(2,931)
Բարեգործական ծախսեր	7	(188,603)	(167,631)
Այլ ծախսեր	8	(796)	(593)
Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս		-	(535)
Տարվա արդյունք		(136)	-
Զուտ ակտիվները տարվա սկզբում		136	137
Զուտ ակտիվները տարվա վերջում		-	136

Գործունեության և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 10-ից 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բարեգործական նպատակներով ստացված դրամական միջոցներ	194,400	189,520
Բարեգործական նպատակներով օգտագործված դրամական միջոցներ	(195,075)	(167,631)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոններ	(2,205)	(2,188)
Այլ վճարներ	(796)	(593)
Վճարված հարկեր	(721)	(746)
Գործառնական գործունեության համար ստացված (օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(4,397)	18,362
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ (նվազում)/աճ	(4,397)	18,362
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	-	(535)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	20,961	3,134
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	16,564	20,961

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 10-ից 22-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Հիմնադրամի գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Սուքիասյան» Բարեգործական Հիմնադրամը քաղաքացիների կամավոր

Գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամը հիմնվել է 20 նոյեմբերի 1998թ. որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն: Այնուհետև վերակազմավորվել է որպես հիմնադրամ: Գրանցման համարն է՝ 278.110.02589, ձեռնարկության պետական գրանցման վկայականի համարը 01Ա 043697, վերագրանցվել է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարի 29 նոյեմբերի 1999թ. Թիվ 1962 հրամանով, վկայականի համարն է՝թիվ 46:

Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և չունի մասնաճյուղեր: Հիմնադրամի գտնվելու վայրն է ՀՀ, ք. Երևան,Չելյուսկինցիների 62:

Հիմնադրամի կանոնադրական նպատակներն են՝

- Մշակութային գործունեության կազմակերպում,
- Ցուցահանդեսների և ցուցանմուշների կազմակերպում օրենքով սահմանված կարգով,
- Սպորտային միջոցառումների կազմակերպում,
- Գիտական հետազոտությունների կազմակերպում,
- Հրատարակչական գործունեություն՝օրենքով սահմանված կարգով:

Հիմնադրամի բարձրագույն կառավարման մարմինը հիմնադիրների խորհուրդն է,որն ընտրում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներին: Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կազմված է չորս անդամից:

Խորհրդի նախագահին իրենց կազմից ընտրում են Խորհրդի անդամները՝ երեք տարի ժամկետով:

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա ՝Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

2020թ.-ին վեր հասած Կոռոնավիրուսը (COVID 19), որը Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից որակվեց որպես պանդեմիա, և հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմը, կանգնեցրեց ՀՀ տնտեսությունը խորը ճգնաժամի առջև: Սրվեցին քաղաքական իրադարձությունները և մեծացավ անորոշությունը տնտեսության հեռանկարային զարգացման նկատմամբ: 2021թ.-ին ՀՀ կառավարությունը մեղմացրեց Կոռոնավիրուսի արդյունքում սահմանած սահմանափակումները, որի արդյունքում աճեց տնտեսական ակտիվությունը և

Հայաստանի Հանրապետությունը գրանցեց դրական տնտեսական աճ: Այնուամենայնիվ 2021թ.-ին ի հայտ եկած կոռոնավիրուսի երկու նոր՝ «Դելտա» և «Օմիկրոն» շտամերի պատճառով սահմանափակումները չհանվեցին: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Հիմնադրամի իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Բացի այդ, համաշխարհային տնտեսության անկմամբ պայմանավորված՝ Հայաստանի հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վերաբերյալ դեռևս առկա են անորոշություններ, ինչը կարող է հանգեցնել արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչպես նաև հանքահումքային ապրանքների միջազգային գների անկմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը մեծ կախման մեջ է գտնվում: Շուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Հիմնադրամի վիճակի վատթարացման:

Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Հիմնադրամի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ):

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է հազար միավոր:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և

ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2021թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

ՀՀՄՍ 1 (Փոփոխություններ) «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» և ՀՀՄՍ 8 (Փոփոխություններ) «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» - «Էականի» սահմանում

ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՀՀՄՍ 1-ի և ՀՀՄՍ 8-ի փոփոխությունները՝ «Էականի» սահմանումը պարզաբանելու համար և հայեցակարգային հիմունքներում ներկայացված սահմանումը բուն ստանդարտներում ներկայացվածի հետ համապատասխանեցնելու համար:

ՀՀՄՍ 1-ում էականության վերաբերյալ պահանջները փոփոխվել են՝ շեշտադրելու համար այն փաստը, որ տեղեկատվությունը չպետք է խմբավորվի կամ ապախմբավորվի այնպիսի եղանակով, որը կթաքցնի էական տեղեկատվությունը: Փոփոխություններում նաև մատնանշվում է, որ էականությունը կիրառվում է ֆինանսական հաշվետվությունների բոլոր տարրերում՝ ներառյալ առաջնային ֆինանսական հաշվետվությունները, ծանոթագրությունները և հատուկ բացահայտումները, որոնք պահանջվում են առանձին ՖՀՄՍ-ներով: Փոփոխության նպատակն է խրախուսել ընկերություններին (և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և վերանայման գործընթացում ներգրավված այլ անձանց) ուշադիր մոտեցում ցուցաբերել ներկայացման պահանջներին և այն տարրերին, որոնք պետք է ներառվեն ֆինանսական հաշվետվություններում:

Առաջնային հաշվետվությունների տողերի բովանդակությունը հստակեցվել է, պարզաբանելով, որ ինչպես կարիք կա ոչ էական տարրերը խմբավորել, այնպես էլ հնարավոր է, որ էական տարրեր պարունակող անհատական տողերը կարիք լինի ապախմբավորել:

Այս փոփոխությունները ուժի մեջ են մտել 2021թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ժամկետից շուտ կիրառումը:

ՀՀՄՍ 1 (Փոփոխություններ) «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» - պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ

2021թ. հունվար ամսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՀՀՄՍ 1-ի «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» փոփոխությունները, որոնք հստակեցնում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պարտավորությունները ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու համար կիրառվող չափանիշները: Փոփոխությունները նախատեսված են պարտավորությունների դասակարգման հանդեպ ավելի ընդհանուր մոտեցում տրամադրելու համար՝ հիմք ընդունելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա պայմանագրային պայմանները:

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգումը հիմնվում է այն հանգամանքի վրա, թե արդյոք Հիմնադրամը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ իրավունք ունի՞ հետաձգելու պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո առնվազն տասներկու ամսով: Փոփոխությունները նաև պարզաբանում են, որ

«մարել» եզրույթը ներառում է կանխիկի, ապրանքների, ծառայությունների կամ սեփական կապիտալի գործիքների փոխանցումը, եթե սեփական կապիտալի գործիքները փոխանցելու պարտավորությունը չի առաջանում փոխարկման հատկանիշից, որը բաղադրյալ ֆինանսական գործիքի պարտավորության բաղադրիչից առանձին է դասակարգված որպես սեփական կապիտալի գործիք:

Քանի որ այս փոփոխությունները գոյություն ունեցող պահանջները պարզաբանում, բայց չեն փոխում, չի ակնկալվում, որ դրանք նշանակալի ազդեցություն կունենան Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ժամկետից շուտ կիրառումը:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների փոփոխություններ

Վերանայված հայեցակարգային հիմունքներում ներառված է չափման մասին նոր գլուխ, ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վերաբերյալ ուղեցույց, կատարելագործված բնորոշումներ և ուղեցույցներ, մասնավորապես՝ պարտավորության սահմանումը, ինչպես նաև կարևոր բնագավառների վերաբերյալ պարզաբանումներ, ինչպիսիք են օրինակ՝ կառավարման, զգուշավորության և չափման վերաբերյալ անորոշության դերը ֆինանսական հաշվետվություններում:

Այս փոփոխությունները ուժի մեջ են մտել 2021թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ժամկետից շուտ կիրառումը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

	2021	2020
ԱՄՆ դոլար	480.14	522.59

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը, բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի արդյունքում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող օգուտը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն զուտ ակտիվներում:

Հիմնադրամի ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են դրամից հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը:

3.2 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամը՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են տարվա արդյունքում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հիմնադրամը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Հիմնադրամը օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Հիմնադրամը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից: Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ 31 դեկտեմբերի 2021թ.-ի դրությամբ դեբիտորական պարտքերի գծով առկա չէ մնացորդ ուստի դեբիտորական պարտքերի գծով պահուստ չի ճանաչվել:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.3 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Հիմնադրամը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.4 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

(գ) քաղաքացիաիրավական հիմունքներով վճարված եկամուտները

3.5 Ստացվող շնորհներից եկամուտ

Շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջնում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

Ստացված պետական շնորհները չեն ճանաչվում այնքան ժամանակ, մինչև առկա չլինի ողջամիտ հավաստիացում, որ Հիմնադրամը կհամապատասխանի իրեն կցված պայմաններին, որի արդյունքում կստացվեն շնորհները:

Պետական շնորհները ճանաչվում են շահույթ կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ Հիմնադրամը ճանաչում է շնորհին վերաբերվող ծախսը: Մասնավորապես պետական դրամաշնորհների հիմնական պայմաններն այն են, որ Հիմնադրամը պետք է կառուցի, գնի, կամ այլ կերպ, ձեռք բերի ոչ նյութական ակտիվ (Այդ թվում շենք, շինություններ, սարքավորումներ), որը ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և համակարգված և ռացիոնալ հիմունքով ճանաչվում շահույթ կամ վնասի մասին հաշվետվությունում՝ ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

4 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Բանկային հաշիվներ	16,564	20,961
	16,564	20,961

Բանկի մնացորդների արժույթները ՀՀ դրամ են:

5 Եկամտին վերաբերվող շնորհներ

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Ընթացիկ		
Հետաձգված եկամուտ	23,041	20,830
	23,041	20,830

Հազար դրամ	2021	2020
Տարեսկզբի մնացորդ	20,830	3,000
Տարվա ընթացքում ստացված	194,400	189,520
Տարվա ընթացքում ճանաչված	(192,189)	(171,690)
	23,041	20,830

Շնորհները ստացվում են փոխկապակցված ընկերություններից՝ հիմնականում բարեգործական նպատակների իրականացման նպատակով:

Ստորև ներկայացված է նվիրատուների կողմից ստացված գումարները՝

Հազար դրամ	2021	2020
Սուքիասյան Խաչատուր Ալբերտի	45,000	-
Սուքիասյան Ռոբերտ Ալբերտի	35,000	-
Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի	35,000	-
Սուքիասյան Էդուարդ Ալբերտի	35,000	-
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	35,000	67,500
«Արարատ Ինկասացիա» ՓԲԸ	5,000	1,000
«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ	2,000	-
Սիլիկոն թրեյդ ՍՊԸ	2,000	-
Նարեկ ՍՊԸ	400	300
«Դոնի Նախիջևանի հայկական համայնք» ՀԿ	-	119,650
«Կոմանդիր Սեքյուրիթի» ՍՊԸ	-	1,070
	194,400	189,520

2020թ.-ի Հոկտեմբեր ամսին Հիմնադրամը ստացել է նպատակային նվիրատվություն «Դոնի Նախիջևանի հայկական համայնք» ՀԿ-ից, որի նպատակն է եղել աջակցել Արցախում պատերազմական գործողություններում մասնակցող կամավորական ջոկատներին, ինչպես նաև

Արցախում անօթևան մնացած և ժամանակավորապես պատսպարված սոցիալապես անապահով ընտանիքներին (ծախսը տե՛ս Ծանոթագրություն 7):

6 Շնորհներից եկամուտ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Շնորհներից եկամուտ	192,189	171,690

7 Բարեգործական ծախսեր

Հազար դրամ	2021թ.	2020թ.
2021թ-ի հունիսի 1-ին Երևանի Հանրապետության հրապարակում երեխաների տոնին նվիրված բացօթյա համերգ	150,000	-
Կանգառների մետաղական տաղավարներ	8,340	-
«Սիթի օֆ Սմայլ» Բ/Հ-ին անհատույց հատկացում	8,000	-
1500 սոցիալապես անապահով ընտանիքներին անհատույց ամանոյա նվիրափաթեթներ	7,575	-
ԱՀ ԱԱՄ վետերանների միություն	5,000	-
168 հատ լուսատու Նուբարաշեն վարչական շրջանի համար	3,024	-
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա	3,000	-
Ֆիզիկական անձանց օգնության տրամադրում	2,234	324
Ուսանողների ուսման վարձի փոխհատուցում	590	1,070
44-օրյա պատերազմի ժամանակ անհայտ կորած և գերեվարված զինվորների ծնողների համար	500	-
Բուժման նպատակով նվիրաբերում	150	450
Մարտակերտ, Մարտունի, Հադրութ, Ասկերան շրջանների և Ստեփանակերտի սոցիալապես անապահով, անօթևան ընտանիքներին, ինչպես նաև Արցախի մարտերում մասնակցող կամավորական ջոկատներին պարենային ապրանքների, (շաքարավազի, ձեթի և այլ ապրանքների) անհատույց նվիրաբերություն	-	119,120
Արցախի հանրապետության Ասկերանի շրջանի Սձնախ համայնքի փողոցների սալապատման համար անհատույց հատկացում՝ «Կապավոր» ՍՊԸ-ին	-	22,500
Արրցախի Հանրապետության Ոստիկանությանը ՈՒԱՋ Հանտեր 2924-013 մակնիշի երկու մեքենա տրամադրելու նպատակով անհատույց հատկացում՝ «Կարկոմավտո» ՍՊԸ-ին	-	12,500
Ֆիզիկական անձանց օգնության տրամադրում՝ սնունդ	-	8,291
Երևանի թիվ 15 մանկապարտեզի թվով 2 սենյակի վերանորոգման համար անհատույց հատկացում՝ «Վանուշ» ՍՊԸ-ին	-	3,376
Այլ	190	-
	188,603	167,631

8 Այլ ծախսեր

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	650	550
Բանկային ծառայությունների ծախսեր	18	40

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Այլ	128	3
	796	593

9 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

10 Ֆինանսական գործիքներ

10.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

10.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16,564	20,961
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	16,564	20,961

11 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի որոնք բխում են գործառնական գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժութային ռիսկի 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա չեն:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ

բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամը ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

12 Իրական արժեքի չափում

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

12.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Հետևյալ աղյուսակում ցույց են տրված նշված մակարդակները՝ պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հիերարխիայում՝ 2021թ. դեկտմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար դրամ		Իրական արժեքի չափման հիերարխիա		
Նկարագրություն	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռային արժեքը	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական *արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16,564	16,564	-	-

Հազար դրամ		Իրական արժեքի չափման հիերարխիա		
Նկարագրություն	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռային արժեքը	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական *արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	20,961	20,961	-	-

Բանկային հաշիվների հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

13 Պարտավորվածություններ

13.1 Իրավական պարտավորվածություններ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ , ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացության օրվա դրությամբ Հիմնադրամի նկատմամբ առկա չեն որևէ դատական հայցեր: Միևնույն ժամանակ Հիմնադրամը վերոնշյալ ամսաթվերի դրությամբ չունի որևէ դատական հայց ընդդեմ երրորդ կողմի:

14 Պայմանականություններ

14.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության համաձայն:

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները դրամարկղում ու բանկերում: Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված դրամարկղում և բանկերում մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	16,564	20,961

Բարեգործական նպատակներով ստացված դրամական միջոցները իրենցից ներկայացնում են, միջազգային, տեղական, կապակցված կողմերից ստացված շնորհները: Բարեգործական նպատակներով օգտագործված դրամական միջոցները իրենից ներկայացնում են հաշվետու

տարվա ընթացքում կատարված ծախսերի, նվիրատվությունների, բարեգործական ծախսերի գծով մատակարարներին և նվիրառուներին վճարներ: Աշխատակիցների վճարները ներառում են աշխատավարձ և պարգևատրումներ և գործուղման վճարներ: Վճարված հարկերը հիմնականում աշխատավարձից գոյացած եկամտային հարկի, սոց. վճարի և դրոշմանիշային հարկի վճարներն են:

16 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են հիմնական ղեկավար անձնակազմը, անդամները:

16.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է հոգաբարձուների խորհրդի կողմից:

16.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Ստացված շնորհներ		
Սուքիասյան Խաչատուր Ալբերտի	45,000	-
Սուքիասյան Ռոբերտ Ալբերտի	35,000	-
Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի	35,000	-
Սուքիասյան Էդուարդ Ալբերտի	35,000	-
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	35,000	67,500
«Կոմանդիր Սեքյուրիթի» ՍՊԸ	-	1,070
«Արարատ Ինկասացիա» ՓԲԸ	5,000	1,000
Նարեկ ՍՊԸ	400	300
	190,400	69,870

16.3 Գործարքներ ղեկավարության հետ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ (ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը)	1,802	1,806

17 Հիմնադրին վերագրելի զուտ ակտիվներ

Հիմնադրին վերագրելի զուտ ակտիվները իրենից ներկայացնում է Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների տարբերությունը, որն առաջացել է հիմնադիրների կողմից կանոնադրական նպատակների իրականացման համար ներդրումից: Ինչպես նշվել է ծանոթագրություն 2.1-ում ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Ելնելով վերոգրյալից,ինչպես նաև հաշվի առնելով բացահայտվող տեղեկատվության օգտակարությունը սույն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների համար, Հիմնադրամի ղեկավարությունը նպատակահարմար է գտնում ներկայացնել հիմնադրին վերագրելի զուտ ակտիվների շարժը՝

Հազար դրամ	Հիմնադրին վերագրելի զուտ ակտիվներ
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	137
Ավելացում	
Նվազում	(1)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	136
Ավելացում	
Նվազում	(136)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	-

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 12.09.2022 16:36